**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Թիվ 139
« 15 » դեկտեմբերի 2017թ.

Լոռու մարզի մարզպետ
Պարոն Ա.Նալբանդյանին

Եղեգնուտի համայքնապետարանը Ձեզ է ներկայացնում համայնքի ղեկավարի թիվ 37 և 38 որոշումները:

Համայնքի ղեկավար՝ Մ.Հովհաննիսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 37-Ա

## ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշումը՝

Որոշում եմ.

Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանների շահագործման հետ կապված գործառույթների իրականացման պարտականությունները դնել համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Պետրոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 13
գ.Եղեգնուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
հեռախոս 6-83-37
էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2017 թվականի N 38

## ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017թ.-ի դեկտեմբերի 13-ի թիվ 28-Ա որոշումը «Եղեգնուտ համայնքի 2018թ.-ի բյուջեն հաստատելու մասին»

Համայնքի ղեկավարը որոշում է.

1. Հաստատել Եղեգնուտ համայնքի 2018թ.-ի բյուջեն մուտքային և ելքային մասերի բաշխումն ըստ եռամսյակների:
2. Հաստատել համայնքի ենթակայության տակ բյուջետային հիմնարկների 2018թ.-ի ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական հոդվածների:

Եղեգնուտ համայնքի ղեկավար՝ Մ.Հովհաննիսյան